

ԲԵԼԵԲԱԳԻՐ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹՈՒՇԱՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



ԱՍԿ Ա. Ա. ՅԻ Կայսերական Հնագիտական հասկուլուտական Ընկերութիւնը շորս տարի սորանից առաջ, այս է 1893 թ.

բարձրագոյն չորրեց առառ դրամական օժանդակութեամբ, իւր անգամակիցներից երկուսին՝ պ. պ. Ա. Խվանվուկուն և Մ. Նիկոլավուն՝ ուղարկեց Ռուսաց Հայաստան, յանձնելով նոցա հնագիտական խուզարկութիւններ ու պեղումներ կատարել այնաեղ. իսկ ձեռնարկութեան արգասիաց մասին իւր ժամանակին մանրամասն քեկուցում տալ ընկերութեան նիստերում: Յիշեալ գիտնականները մեծ յաջողովեամբ կատարեցին իւրեանց վրայ ստանձնած ծանր դործը, և ընկերութեանս հրապարակական նիստերում, ի ներկայութեան Մոսկվայի կուսակալ՝ Նորին կայսերական Բարձրութեան Սերգէ Ալեքսանդրովիչի, կարգացին իւրեանց նշանաւոր զեկուցումները՝ Ռուսաց Հայաստանի մասին: Այնուշետե նոյն երկու պարոնները զբաղեցան Հայաստանից բերած նիմիթերի մշակութեամբ, որպէս զի օր ընկերութիւնը կարողանայ լոյս ընծայելու նոցա երկերը: Ահա, զերջապէս, անցեալ 1896 թ. լոյս աեսաւ այսաեղ Պ. Մ. Նիկոլավունը ուսումնական դործը, որի խորապիրն այս է. Կլինոօբրազնութեան Հաճուկ Յակավազը. Աչքածուածուածու Մ. Վ. Խոկոլյսկացո. Մոսկա 1896. « Անդրդուկասի բնեազիքի արձանագրութիւններ. — Հետազոտութիւն Մ. Վ. Նիկոլավուն. Մոսկվա, 1896 թ. »:

Դա մի շքեղ հրատարակութիւն է, բազեացած 188 էջերից. գիրքը զարդարուած է Հայաստանի զանազան տեղերի ու վայրերի տեսարաններով, որոնց մէկն “ Եաւանց Երասմիայ ”, արտատպած է հ. Պ. Ալիշանի Սիսականից (տես. Սիսական էջ 415). բաց ի դորանից, այսաեղ կան նաև բնեազիքեր, նոցա լուսատիպը, զերծանութիւնը ու ուստեւն

թարգմանութիւնը: Իւր երկասիրութեան սկզբում հեղինակը զետեղել է մի ընդարձակ ներածութիւն, որ բաւականին լոյս է սփռում Հայաստան աշխարհի հնագոյն պատմութեան վրայ, և արժանի է հայ բանասիրաց խորին ուշազրութեան: Այս պատճառաւ մենք պատշաճ համարեցինք բանի մի ցաղուածքներ անել յիշեալ զրբից ու հաղորդել թաղաղվեղ հանտէն ընթերցողներին:

Ավելի զար նախ քան Վրիստոսի ծնունդն, զրում է պ. Նիկոլավի, մեր կովկասեան երկիրների յետին ծայրում, Երևանի, կարսի և մասամբ Ելիսարեթպօտի սահմաններում, կատարում էր մի շատ խոչյոր արշաւանք, որ ձեռնարկել էին վան քաղաքի թագուարի թագուարիները հարածից զէպ ի հիւսիս. զորա յիշատակներն ըեռազիք արձանագրութիւններն են, որոնք փորազրուած են մասամբ ժայուիրի, մասամբ էլ Անդրդուկասի հինաւուրց շինուածոց վրայ, և կամ զտնում են նոցա աւերակների մէջ: Հարաւում երկար տարիներ յամառութեամբ պատերազմ՝ մղերով Ասորեստաննեայց հզօր միապետութեան զէմ, որից նոցա ճզնում էին կորզել համաշխարհային տէրութեան զերիշխանութիւնը, վանի թագաւորները մի և նոյն ժամանակ անփոնջ եռանդով ու մեծ յաջողութեամբ իւրեանց արշաւանքը ուղղում էին զէպ ի հիւսիս, յայթերով վրոյոր խոչյուղուաներին, որ ներկայացնում էին նոցա արձար լերանց զօսիքը, մեծ զետերի հոսանքը և հիաւոր տարածութիւնները: Ասորեստաննեայց բարեկացուցուց հիստ նոցա տոհմային ազգակցութիւն չօննէին, բայց Երասմիր հովտի և նորան շրջապատող ֆոբը կովկասի լերանց բնակիչների հետ նոցա ըստ երեսթին, տոհմայի էին: Միայն երկու թագաւորների օրերում նոցա յաջողեցաւ նուանել Փոքր կովկասի բոլոր գաւառները. և մենք պարզ նկատում ենք նոցա նպատակն աւարծել իւրեանց զինու զօրութիւնը աւելի հեռու՝ զէպ ի Մշեծ կովկասի բարձունքը. սակայն Ասորեստանի զէմ սկզած ժահու կեմ կենաց պատերազմ՝ անյաջող ելք ու նիշան նոցա համար, և վերջ զրբց նոցա տիրապետութեան անմանը հիւսիսում:

Հնախօսութեանը միայն վերջին ժամանակներս յաջողեցա գտնել ու մեկնել պարական պատմութեան այս միանգամայն մոռացուած, բայց շատ նշանաւոր էջը Ասորեստանից գեկ ի հիւսիս եղած մի զօրեղ թագաւորութեան գոյութեան մասին, որ և նորա մշտական հակառակորդն էր, մենք առաջին անգամ տեղեկանում ենք նոյն Ասորեստանի թագաւորների տարեգրերից, որ այդ թագաւորութիւնը Աւրարտու անունն է կրում, որ համապատասխանում է Աստուածաշունչ զրոց Արաբատին։ Ասորեստանի թագաւորի ների արշաւանքները գեկ ի Աւրարտու, սկըսվեցան գեռ ԺԲ զար նախ քան զբրիստոս, Տիգրա - Պիւսեր առաջին թագաւորի օրերում. սակայն Ասորեստանի միապետների տարեգրերը միայն Թ զարուց սկսվում են լցուիլ պէսպէս տեղեկութիւններով և հաշիճներով Աւրարտուի գէմ մղած անրնդհատ և արիճանհեղ պատերազմների մասին, և այդ յատկապէս Այլմանասար երկրորդի ժամանակից (885-860 թ.)։ Յիշաւակութեան արժանի է մանաւանդ Տիգրատ-Պիւսեր երրորդի (745-723 թ.) արշաւանքը, որ շատ ծանր հարուած հասուց Աւրարտուն. և Սարգսն առջնի (722-705 թ.) արշաւանքները, որոնք պատկիւլով Աւրարտուի կատարեալ պարտութեամբ, միանգամայն վերջ զրին զարեսր կոփներին, որ Սարգսնի օրերում յետին ծայրայեղովթեան էր հասել։

Յիշեալ Սարգսն թագաւորի տարեգրերը (յայսնի բան է գրուած քարերի կամ աղիսների վրայ, վասն զի մազաղաթի զործածութիւնը այն հին ժամանակներում տակախն յայտնի չէր), ին են յատկապէս այդ պիւտպանկան գոռ պատերազմների նկարագրութեամբ, որ երկու ազգերի ու պետութեանց համար՝ մահու կամ կենաց հարց էր. կոփների զիւցազի Աւրարտան կողմից Աւրծա էր կամ իտուզա, որ կարողացաւ զբութով յարուցանել Սարգսնի գէմ բոլոր հիւսիսային ազգովթիւնները ու ցեղերը. Դա երկու ազգայնութեանց՝ սեմականի և ուրարտեանի մենամարտութիւնն է, մղուած այն ժամանակուացան աշխարհարշակ տիրապետութեան և զերեշնանութեան համար. իւրաքանչիւրը նոյ-

ցանից ցանկանում էր իւր տեսակէսից ուղղութիւն տալ պատմութեան ընթացքին ։ Ենթական ազգայնութիւնը յաղթանակեց. իսկ Ուրարտեանը պարտութիւն կրելով՝ զորանից յետոյ շուտով անհետացաւ պատմական տապարիզից և մոռացութեան մատնուցաւ հազարաւոր տարիների թիմացքում։

Սակայն Աւրարտուի ժագաւորները ամենայն զէպիւմ մրցելով Ասորեստանեայց հետ, յետ չէին մնում նոցանից՝ իւրեանց սիրազործովթիւնները յաւերժացնելու գործում ևս, մանաւանդ արշաւանքների և աշխարհակալութիւնների, կանգնելով յուշարձաններ և փառաւոր շնչեր, ժայռերի ու պէսպէս շինութեանց վրայ արձանագրութիւններ փորագրելով, որոնք աւանդում են նոցա գործերի մասին։ Աւրարտեան թագաւարների կառուցած շնչերը գտնուում են, յատկապէս, նոցամյարագարեի աեղում, այդման վանում, որ ամբողջ ահազին ժայռը մինչև ցայիմ կրում է իւր վրայ այս տիրապետողների հրսակայական աշխատանքի հետքերը, որոնց ճնունում էին ստեղծել այստեղ մի անհմատչելի ամրոց։ Այստեղ էր սկսած ժայռի երեսին, որպէս և շնչերի միջում, որ Վանի քաղաքաման են կազմնամ, զանուած են ոչ սակաւ ըենոազիր արձանագրութիւններ, որ պատկանում են այս թագաւորներին։ Եւ քանի որ գիտովթիւնը տակաւ առ տակաւ սկսաւ հետաքրքրուել այս յիշաւակարաններով և ժողովել այն, երեսցաւ որ սոյն աեսակի ու ծագման արձանագրութիւններ զանուած են վանի մօտ և նորանից հետու ամենայն ուղղութեամբ։ Մինչև այժմ Վանի թագաւորները մնացած արձանագրութիւններից հարիրի չափը արձէն յայտնի են և նոցանից 87ը գիտութեան սեպականութիւն են կազմուած։

Այս յիշաւակարանների և արձանագրութիւնների գտնելու պատկանում է գերմանացի ւսումնական իդ. Շուլցին, որ 1827 թ. ուղարկուած էր ֆրանսիական կառավարութեան. Կողմից հետագօտելու վանքաղացը՝ հնագիտական տեսակէտից, և ընդօրինակելու այնտեղ եղած արձանագրութիւնները (աեւն. *Journal Asiatique*

(1840թ.) Sur le lac de Van et les environs). իսկ վերծանելու նախաձեռնութեան պատիվ՝ Քրանսիական արևելագէտ Ստանիսլաս Գույարդ (Stanislas Guyard) 1880թ. (տե՛ս *Journal Asiatique*, 1880 էջ 540—543): Այս գործը շարունակեց յայտնի լեզուագէտ և աստիրիոզ* Օքսոփորդի համաստանի ուսուցչապետ Ակսու (A. H. Sayce), որ, Գիյեմարի մեթոդի շնորհիւ, վերլուծեց և 1881թ. առաջին անգամ լոյս ընծայեց զիտութեան յայտնի բոլոր բնելագիր արձանագրութիւնները, ի ասպարինչ այսօր ևս հրատարակում է այն՝ ըստ շափու երեւելոյն նիւթերի լոյս աշխարհ¹: Սակայն ներկայումն, բաց ի Ակսու, արևմտեան Եւրոպայում կան քանի մի ուսումնականներ, որոնք նույրում են իրանց այս բնագիրների հետազոտութեանը, և այն մեծ յաջողութեամբ. զոր օրինակ, Վիեննայի համարարանի ուսուցչապետ (D. H. Müller) Հ. Միւլլերը, որ շատ նպաստեց արձանագրութիւնների վերծանութեան գործին, թեովինի ուսուցչապետ Լեմանը, որ աշխատում էր ընկերակցութեամբ բնագէտ Վալդիմար Բելիի. վերջինս մինչեւ անգամ մի ճանապարհորդութիւն կատարեց Ռուսաց և Ցամկաց Հայաստանում՝ յատկապէս այս արձանագրութիւնները հետազոտելու դիտարութեամբ. Ենուն, որ հրատարակեց քանի մի նշանաւոր նկատողութիւններ յիշեալ արձանագրութիւնների մասին:

Բայց չնայելով սոյն արձանագրութիւնների վերծանութեան մեծ յաջողութեանը, զիտութեան շախջողեցաւ նմաննեցնել Վանի արձանագրութիւնների լեզուն՝ ոչ էլ բացատրել Վանեան կամ Ուրարտեան ժողովրդի ազգագրութեան խնդիրը: Մինչև այժմ ևս զիտնական մերմինովքիան այս մասին շափազանց տատանում է: Մենք չգիտենք, թէ ի՞նչպէս էր իրան կոչում ժողովրդը, որի

լիզուա զրուած են վանի բևեռափիր արձանագրութիւնները, Գիրմանացի հետազոտութիւնների վ. Բելիի և կ. Լեմանի փորձը՝ Վանի ժողովրդը Պոնտոսի Խաղարից կոչու, առ այժմ չպահկլեցաւ յաջողութեամբ. վան զի յիշեալ ուսումնականների պնդութիւն, թէ այդ ժողովրդը իրան իր թէ անուանում էր, Հարլինի այսինքն Խաղարից, շատ կասկածելի է: Սակայն մենք չենք մխտում այն կարծեաց մօտաւոր հիմաւորութիւնը, թէ լատին և յայն հեղինակների Խալծու, Խալծու նոյն են Վանի համ Ուրարտուի ժողովրդի հետ: Երկրի բուն անուանների մէջն էլ կան շաստ մոլոր կէտեր, բատ որում ըստ Ասութեանուայց տերմինովգիայի այս երկիրը կոչում է Ուրարտու (Ուրարտա), այն ինչ նոցաքան յիշատակարաններում Բիայնա (Վան): Ի՞նչ կապակցութիւն ունին այս անուանները միմեանց հետ, և ինչն Ասորեստաննեայց կոչումը չէ գանում Վանեան աղբիրներում և ընդհակառակն Վանեանը Ասորեստանի. այս հարցերը առ այժմ չեն կարող ճշգիւ որոշուիլ: Սակայն վերջին հանգամանների հաւանական մեկնութիւնը, մեր կարծիքով, կարող է լինել այն, որ սոյն թագաւորութեան կենդրունը թուղարում, երբ Ուրարտեան ցեղերը առաջին անգամ համակերպում կին մի տէրութեան, սկզբում հիւմիումն էր, լինային աշխարհում, եթէ ոչ Մեծ Մասիսի մօտ, Երևանի գաշտավայրի սահմաններում, զնէ, յամենայն դէպս, Վանի լիք գէպի հիւմիս: Ասորեստանի թագաւոր Սամբանասարը, Սուուննիս ամրոցն հասնելու համար, որ յիշեալ թագաւորութեան կենդրուատեղին էր, պէտք է լինեն բարձրանար Վանից գէպի հիւմիս, և ապա կատարած յաղթութիւններից յետոյ իշնել ցած, Վան լիք ափերը: Ի նկատի առնելով որ Երևանեան գաշտավայրը, Արարատ և Արագած լինների մէջ, չին ժամանակներից մինչև այսօր Հայերից Այրարատեան նահանգ է կոչում, շատ հաւանական է, որ այս գաշտավայրում, յիշեալ լիններից անջրպետեալ սահմաններում էր գտնում ի հնումն Ուրարտուի թագաւորութիւնը: Բայց յետոյ, լի զարու առաջին կիսում, այս թագա-

* Ասորեստանի ու Բաբելոնի բնեւեագէր արձանագրութիւնների վերծանուշ. — Մահ. բարգ. 1. Տե՛ս The cuneiform inscriptions of Van. և այլն:

ուղարկեան կենդրոնը, հաւանական է, որ ուղարկեան գիտութեան շնորհիւ, տեղափոխում է Հարաւ, Վան լճի արևելքան ափեղը, ուշ Ներկայում վան բաղաբն է զբանութեամբ: Վանի ահազին անմատչելի ժայռ նորան շրջապատող լինաշղթաներով, առաջաւոր պատուար էր նոր աերոլիթեան համար սորա պատերազմների միջոցին Ասորես-ասանցոց դէմ: Այստեղ, հարիք տարուայ ընթացքում, թագաւորում էր վեց թագաւորութերից բաղկացած մի հարստութիւն, յաջորդարար աւանդելով իշխանութիւնը հօրից որդուն: յանձնին այս իսկ հարստութիւն համաշխարհայինն — պատմական ասպարեզ հանդէս է զուրո գալիս մինն հզօրազյն ախոյեաններից, որոնց նմանը հազիւ ունեցել է երբ և ից Ասորեստանի մեծ միավետութիւնը: Հաւանական է կարծել, որ նոր հարստութիւնը նոր տեղում իւր տէրութեանը առուա նոր պաշտօնական անոն, բայց Ասորեստանցիք շարունակում էին զործութերու առաջին աշխարհազրական տերմինները: Այս ամենը հարկա կարօտ է վաւերացման, որ հազիւ թէ երկար կը պաշէ: վասն զի մի արձանագրութեան վրայ (Զախարով Սեւանի լճի ափին), ինչ յաջողեցաւ կարգալ մի անոն, որ հնարաւոր է նմանեցնելու Ասորեստանցոց Աւրարուու կոչման: ինչ որ վերաբերում է արձանագրութիւնների վերանաւութեանը, պէտք է նկատել, որ այդ զործում մենք զեր եւս հեռու ենք այն ճշգութիւնից, որով կարգացում են Ասորեստանի արձանագրութիւնները: որովհետեւ Աւրարտեան բւեւապրերի ընթերցանութիւնը, չնայելով առհասարակ իւր անպայման ճշգութեանը, տակաւին չէ կարելի ստուգել մի այլ յայտնի լինուաւ զրած ընազրից: Միակ, նորերումն զտած երկլեզու արձանագրութիւնը վանեան և Ասորեստանցոց լիգուաւ, այն պիսի ողորմելի զրութեան մէջ է, համեմատութեան համար այնքան չնչին նիւթ է բովանդակում, որ մի բայլ անզամ յառաջ շնչեց արձանագրութիւնների վերծանութեան գործը, թէ և միւս կողմից նպաստեց այն համոզմներին, թէ վերծաններու մեթով ճիշտ է, ճանաչուած զիստեմինից և գործադրու

թինից ստացած արգասիքից: Շատ բառեր ու ցերականական ձևեր՝ վանի արձանաւ, զրոյթինների բնազիրներում գեղեւու անբացատրելի են մնում, և մենց ցիշ յայս ունինք, որ դոքա մեխուզին ապագայում, եթէ նորանոր և նշանաւոր զիւտեր չընինք: Բարերախտաբար այսպիսի զիւտերում պակասութիւն չէ նշամբառում, և ատրի չէ անցնում, որ զիւտովինը չհարսանայ նոր յիշատակարաններով, նոր բնազիրներով հանգերձ, որոնք լոյս են սփռում նախկին բնազիրների մուգը աեղերի վրայ: Գոյցէ, վերջ ի վերջոյ, նոր զիւտերի շնորհի՝ պարզուի Աւրատացոց ազգայնութեան խնգիրը, բայց ներկայումն զրականապէս կարելի է ասել, որ զա հասարակաց ոչինչ չունի Հայոց ազգութեան հետ, որ փոխարինել է Աւրատացոց այն երկրում, ուր դոքա էին բնակուում Շատ կարող է լինել, որ բազմաթիւ ցեղերի մէջ, որոնք ապրում են կովկասեան լիտներում, գտնուին պատմական աստարիզից անհետացած այս ցեղի մասցրիները, և կեզուարանական համեմատութիւնները այդ տեսակետից յամեննայն զէսա ցանկալի են:

Այս արձանապրովիթիւնների, նոցա բովանդակօվիեան ու լիսուի, որպէս նաև այլ նոցա ժամանակակից՝ յիշատակարանների հետազօտութեան շնորհի յարուցած խորին հետաբըրբութիւնը, ըստ մեծի մասին կաշխեալ է այն հանգամանքից, որ այդ յիշատակարանները, բայց ի իրանց հնութիւնից ու բարձր նշանակութիւնից այն ազգի պատմութեան համար, որին դոքա պատկանում էին, ծառայում են մեզ իրը ուղեցոյցներ Ասորեստանցոց – Բաբելոնցոց քաղաքակրթութեան տարածելոյն գէտ ի հիւսիս: Այս քաղաքակրթութիւնը, ասեղօդուած միջազգետեան թագաւորութիւնների մէջ, որոնց հնութիւնը հինգ հազար տարուց աւելի էր նախ քան գիրիստաս, ստացաւ շատ ընդարձակ տարածութիւն հին աշխարհում: Ասածաւոր Ասմիայի բոլոր ազգերը զանազան ժամանակի և զանազան շափով ընդունեցին Բաբելոնցոց քաղաքակրթութեան բարիները: Եթեին ժամանակը դրան նպաստեցին Ասորեստանցոց արշաւանքները ու աշխարհակայտութիւնը,

ները. բայց ներկայումս ցաջ յայտնի է, որ 15 զար Քրիստոսից առաջ, այսինքն նախ քան Ասորեսանի հանդէս գտն, իրեւ համ աշխարհային պետութիւն, բարելոնեան կովառուրան շատ տարածուած էր Ասորուց, Պաղեանինէի, և հիւսիսային Միջազգեստաց աղգերի մէջ: Բարելոնեան լիդուն բեւռուածեւ նշանագրերով այն գործիքն էր, որով կատարուամ էին փոխարինի յարաբերութիւններ առանձին, անկախ ազգերի մէջ. զար օրինակ, Եղիպտոսի և Բարելոնի. որպէս նաև զիանագիտական լիզու էր օտար պետութիւններում. զար օրինակ, Եղիպտոսում, ուր Փարաւոնները բարելոնեան լեզուն էին զործածուամ իւրեանց Ասորուց և Պաղեանինէի նահանգների հետ զրաւոր յարաբերութեան մէջ: Ասորեսանի — բարելոնի լիզուն ամենայն տեղ հասկանայի էր, և երբ ուսումնասիրուած էր նորան բարելոնեան ցեղից օտար մի ազգ, բեւռուածեւ նշանագրերի գուտարին սիստեմը ակներեւ է, որ մի առանձին խոչընդուաներ չէր ներկայացնում: Միով բանիւ, նա էր այն՝ ինչ որ այժմ Քրանսիական լիզուն է, և եթէ արդի ուսումնականներից մէկն՝ Խրնեստ Խրնանը Քրանսիական լիզուն անուանեց տիզերկական և բաշարակիթուաթեան մշտնչենաւոր լիզու, 15 զար Քրիստոսից առաջ բարելոնեան ուսումնականները աւելի մեծ իրաւունքով կարող էին տաել նոյնը՝ իրեանց լիզուի մասին: Ժամանակակից կովառուրան չէ կարելի Քրանսիական անուանել, այն ինչ Առաջաւոր Արեւելը կովառուրան այն հնագոյն ժամանակներում Ասորեսան — բարելոնեան էր ամենայն մասամբ, և Բարելոնի լիզուն միանգամայն յարաբացրած գործիք էր այդ կովառուրայի տարածելոյն համար: Աշխատին գրականական գանձեր բարելոնեան ձաւում աղաքամից արտաքրւում էին կաւային տափառկների վրայ և տարածուամ էին ի սիմեոն աշխարհի. և հարկ է ենթագրել, որ Միջազգեստաց հեռաւորացն տեղերում, օտարացեղ ազգերի մէջ Հիններուամ էին ուսումնաբաններ, դպրոց, ուր տանուամ էին ասորեսանեան գուտարագոյն գրագիտավորին անշանագրերի անվերջ ազիւսականների, սիլլական բարելոնիցում էին անշանագրերի մէջ բարերարութեան տարերը, և թոյլ էր տալիս իրան գեկ ի զայն գործածելով հզօրի իրաւունքը: Բայց հնագոյն ժամանակը, 15 զար նախ քան գիրիստոս, մենք տեսնուամ ենք ազգերի մէջ շերմեղբացրածին, կենցանի փոխարինուամ քաղաքակրծութեան բարիցների և բարձր նիւթական բարեկեցովին Առաջաւոր Աստիայի ազգերի մէջ:

Մարդկութեան զարգացման այս ժամանակակիցին, երբ աշխարհս կրում էր իր վրայ բարելոնեան կրթութեան տառաելութինները, մեր ուշադրութեան ենթակայ են ոչ միայն խոշոր մեծութիններն, որպիսիք են Ասորեստանը, Բարելնը, Եղիպատուը, այլ և այն փոքր պատմական ազգութինները, որոնք այն ժամանակը պատկանում էին կովտուրական ազգերի գերզատանին, և բարելոնեան կովտուրայի տարածողներն էին կենդրունից մօտ թէ հեռու երկիրներում։ Առանձին ուշադրութեան արժանի են Ասորուց և Պաղեստինի յիշատակարանները, որոնք մեծ քանակութեամբ սկսում են երեան զալ։ Բայց ոչ պակաս ուշադրութեան արժանի է նաև այն ազգութինը, որ Ասորեստան՝ բարելոնեան ժամանակուայ կամիջոցին ապրում էր այն ժամանակուայ աշխարհի հեռաւորագոյն հիսկուում, Տիգրիսի և Եփրատի վերին հոսանքներում, Արաքսի հովտում՝ Վան, Ուրմիա և Սևեան լճերի մօտ, և Ծողեց մեզ իր կենաց յիշատակարանները։ Թէ՛ այս ազգը, որ ազգակցութեան կապեր չուներ Միջագետաց և Ասորուց սեմական ցեղերի հետ, և գտնում էր Ասորեստանցուց՝ բարելացուց կովտուրայի անմիջական հզօր ազգեցութեան ներքոյ, թէ նորա կովտուրան միանամայն պիտի կրէր իր վրայ բարելական զրոշմէ, զորա մասին ակներեւ կերպով վկայում է արդէն այն հանգամները, որ Ուրմարտեան թագաւորների արձանագրութինները բնագիրը գծագրուած է ասորեստանեան բեւեաձեւ նշանագրերով։ Բաց ի զորանից՝ Վանի հնագոյն թագաւորներից մէկի՝ Ա. Սարգուրի երկու արձանագրութինները զրուած են ասորեստանեան լեզուաւ։ Բեւեաձեւ նշանագրերի չափազանց գծաւարին սիստեմը թիթեւացրած էր, բազմաթիւ նշանագրերից ընտրուած էին միայն մի ցանխու՝ հասարակները, և յարմարացրած էին Ուրմարտեան լեզուի հնութեակին։ Արձանագրութինների ոճը ներկայացնում է նոյն պէս Ասորեստանի թագաւորների արձանագրութինների նմանութինը, որ և շատ նըպաստեց նոցա վերծանութեանը։ Եւ առհասարակ մենք տեսնում ենք, որ Վանի թա-

գաւորները ամենայն բանում աշխատում են նմանել Ասորեստանցուց, իրենաց աշխարհակալութինների միջցում, զինուորական ճնշումներում, ապարանցներ ու տաճարներ շինելում, արձանագրութիններ էին կանցնում ամենուրեց, ուր մտնում էին զինու զօրութեամբ և ուր որ առամանակ յաջողութիւն էին ունենում կամ մում էին։

Բուռ Ուրմարտեան ժողովրդի մէջն կ մենք պէտք է ենթագրենց Ասորեստան՝ բարելոնեան բաղացակրթութեան լայն տարածութինը, ծանօթութիւն Ասորեստանի լեզուի և զրականութեան և կեանցի անհրաժեշտ առարկաների հետ։

Որովհետեւ այս ազգի յիշատակարանները զնուում են կովկասում, Ծուսիայի սահմաններում, և վկայում են թէ տասրես բարելոնեան կովտուրան հասել էր մինչեւ Փոքր Կովկասի բարձունքը, այն ժամանակ հասկանալի է այն նշանակութինը, որ ունին ուս զիտութեան համար այդ յիշատակարանները։

Վանի բեւեաձեւ արձանագրութինները Ծուսաց սահմաններում առաջին անգամ, 1862 թուականին, գտաւ ս. Էջմիածնի արելայ Մեսրոպ Միդատեանցը՝ այժմ արքեպիսկոպոս, Թէվէտիսի գիտի մօտ, Հայոց կարծեցեալ մայրաբաղաց Արմավիր տեղում։ Երեսուն և երեց տարուայ ընթացրում արքեպիսկոպոս Մեսրոպը շարունակում էր և մինչեւ այժմ ևս շարունակում է որոնել և աշխարհ հանել այս նիւթերը՝ լրյու ընճայելով այդ ամենը ս. Էջմիածնում Հրատարակուող և Արարատ» ամսագրում։ Արեւմտեան ուսումնականները երախտագիտութեամբ օգուտ էին ցաղում նորա հրատարակած բնագիրներից, թէպէտ և շատ անբաւարար էին համարում։ Ի 1892 թ. Մոսկվայի կայսերական հնագիտական Ընկերութինը միաց յղացաւ ի մի հաւաքելով այս բոլոր նիւթերը՝ ննթարկել ուսումնական հետազոտութեան, և այդ նախատակով բանագրութեան սկսեց Մեսրոպ արքեպիսկոպոսի հետ։ Հայաստանեաց Եկեղեցու այս պատկանելի պաշտօնեայն, սիրով ու յօժարութեամբ Ընկերութեան տրամադրութեան տակ դրեց իր ունեցած բոլոր

նիմերը՝ արտապահ յօդուածները, լուսա-
նկարները, ձեռցով ընդորինակածները, այս
ժողովածովն մէջ կային բաց ի հրատարա-
կուածներից, նաև անտիպները։ Յիշեալ նիւ-
թերի մշակովմիւնը Ընկերութեանը ինձ յան-
ձնեց, և այս գործը ես կատարեցի՝ լոյս ըն-
ծայելով այն՝ Ընկերովմեանս և Արեւելամ
Մատսախմիրի հրատարակորչենների» էջե-
րում (Հաստոր Ա, մասն Գ), հետեւալ իս-
րազով՝ «Վաեի բազաւորների բեւեսահնէ
արձանագրութիւնները, որ գտնուած են
Բյուսիայի սահմաններում» (էջ 875—458)։
«Կլիոօբրազնու հաճուս օանքու պար-
ես, ոտքրտու ու ուրծուած Ռուսին։
Այդ երկասիրովմեան մէջ ես առաջին ան-
գամ հրատարակեցի Ծոսաւ սահմաններում
գտնուած արձանագրութիւնները՝ բեւեսահնէ
նշանագրերով, նոցա փոխազրութիւնը (*)
լատին գրերով ու թարգմանութիւնը. նոյն
տեղում ամփոփեցի նոցա գտնուելու տեղն
և առաջին հրատարակութեան վերաբերալ
բոլոր տեղեկովմիւնները։ Այս գործի գնա-
հատուցաւ արեւելտեան սուսումականներից,
մահաւանդ պրօֆ. կ. Լիմնինի կողմից թեո-
լինում, և պրօֆ. Սէյսի Օբրսֆորդում։ Բայց
իմ երկի երեւելոյն չնորհէւ՝ Մոսկվայի կայ-
սերական Հնագիտական Ընկերութիւնը կա-
րողացաւ համազուիլ, թէ ո՞րքան կցկուոր
են այս արձանագրութիւնների մասին տեղե-
կովմիւնները, և ո՞րչափ թերի են Մեսրոպ
արքակիսկոպոսի Ընկերութեանը հասցրած՝
արտահանածները, որով բայտ մեծի մասին
ընդորինակուած են ձեռցով, եթէ ի նկատի
առնելու լինիք, որ սրբազնը ծանօթ չէ
ոչ ասորեստանեան արձանագրութեան սիս-
տեմին, ոչ էլ Վանին սիստեմին։ բացի գորա-
նից, թէ որչափ մեծ է պահանջը արեւելտեան
գիտութեան կողմից դոցա փոքր ի շատէ
բաւարար հետազոտվիւնը, ճիշդ նկարներ
ու աւելի ստոյդ տեղեկովմիւններ նոցա տե-
զագրութեան մասին։

Այդ էր շարժափիթներից մէկն Ընկերու-
թեան համար, որ նա ձեռնարկեց Անդրկու-

կասում բեւեռազիր արձանագրութիւնների
յատուկ գետազառութիւնը։ Միւս ոչ պակաս
նշանաւոր շարժափիւնը այն էր, որ վերջին
ժամանակի օտարերրիդեայ ուսումնականները
յաճախուի ճանապարհորդում էին Ռուսաց
և Ցանկաց Հայաստանում՝ յատկապէօ Վանի
արձանագրութիւններն հետազոտելու նպա-
տակով։ օտարենիքի այդպիսի մի ձգութեան
ուսումնականի գիտակցութեան մէջ յա-
րուցանում էր անդամայի զարտականութեան
զգացութիւն, ցոյց տալ և իւր գործունէութիւնը
այս գեղցում, որ ամենից մօտ յարնչութիւն
ունի ուսու հնախօսութեան հարցերի հետ,
որպէս և մրցակցութեան զգացութիւն այնքան
նշանաւոր սապարիկում է լու կ'ամնարկեմ այս
տեղ Մ. Սիմոնիսի և Հիվերնայի 1888—
1889 թ. կատարած ձեռնարկութեան վրայ
կովկասում, Ռուսաց և Տաճկաց Հայաստա-
նում, որի զիմաւոր նպատակիներից մէկն ևս
էր՝ ժողովիլ Վանի բեւեռազիր արձանագրու-
թիւնները և ուսումնականիրել։ Չնայելով նոցա
գործի անյաջողութեանը Ռուսաց Հայաս-
տանում, յիշեալ ուսումնականները հաւաքե-
ցին մեծ քանակութեամբ նորանոր արձա-
նագրութիւններ և ներկայացրին աւելի ճիշդ
տեղազրական տեղեկովմիւններ զիտութեան
արգելն յայտնի արձանագրութիւնների մա-
սմին (*). «Relation des missions scientifi-
ques de MM. H. Hyvernat et P. Müller-Simonis, (1888-1889)». «Du Cau-
casus au Golfe persique à travers l'Arménie, le Kurdistan, և այլն. Washingt-
ton, 1892»։ Բայց աւելի նշանաւոր և
արգանծօց արքինաւոր էր գերմանացի գիտա-
նական Վ. Բերկի 1891 թ. կատարած
ճանապարհորդութիւնը Տաճկաց և Ռուսաց
Հայաստանում, ուր 22 բեւեռազիր արձա-
նագրութիւններ կամ նորից գտնուած էին
և նոր ի նորոյ հետազոտուած ընդորի-
կուած էին (անգ. Archäologische For-
schungen in Armenien. Թամզ. 1893)

* *Մանկրիպտուած*.

* Իւր ժամանակին մենք հաջորդեցինք Ար-
ձականքում քանի մի տեղեկութիւններ այս նշա-
նաւոր հնագիտական հորդութեան մասին։
Եամ. բարգ.։

այս գիտերը նու արել կը յատկապէս ջաճակացէն ջաճակացնուում։ բայց Ռուսաց Հայութանուում էլ նու յաճախեց համարեա թէ այն բոլոր վայրերը, ուր զտնուում են բնեւեագիր անձանագրութիւններ, և այս նու խտպէս հետազոտելու և ուսումնասիրելու համար այն սահմանները, մինչեւ որ որ տարածուում էին հիւսիսում վանի թաղաւորների աշխարհակարութիւններ։ Նորա փորձերը՝ հանկու Ալուչալուք (Գօլանը—գըռ ոսնի) արձանագրութիւնը, զործի գծուարուութեան պատճուաւու, չափակիցցան յաջողութեամբ։ բայց Օրոտարուինը նու բաւականին նշութեամբ ընդորիստից, խոկ պորֆ. կ. Լեմանը լուս ընծայեց ինցինգրի (autographie) միջոցով։ Ալյուսն լուրջ, թէպէտ և ոչ խոլորժին յաջող (գոնէ Ռուսաց Հայութանի վերաբերութեամբ), ծառա ուսուունականների արած ջանքերը՝ ակամայ հարւկացիցին Մոսկվայի կայսերական Հնագիտական Ընկերութիւնը շատագի հետազոտելու այս նիմիթերը, և զորանով ի կատար ածել ուսուունականների ջանքեց այն, ինչ որ պատշաճ է առա զիտութեան ըստ պարտուց և իրաւոնց, այսինքն է այս յիշաւակարանների վայելու հրատարակութիւնը, որքան որ զտնուած են դոքա Ռուսաց սահմաններուում։

Ուսումնական ճանապարհորդութեան դժուարին և զսեմ գործը՝ Ընկերութիւնը բարդ ինձ և զործ, անզամ Ընկ. Ա. Խիւնովսկու վրայ։ Իմ մասնակցութիւնը իրբեւ արձանագրութեանց հետազոտուի ի հրատարակչի՝ օգտաւէւս համարիցցա այն պատճուաւու, որ ինչպէս Հինկերնայի և թելի փորձը ցոյց տուաւ, արձանագրութիւնների հետազոտութիւնը բուն տեղուում ֆիզիքական և հնախօսական պարապաններով հանգերձ, որոնց ցըլապտուում են յիշաւակարանը, նրապատճուում են նոցա իմաստի մեկնութեանը։ Որովհետեւ արձանագրութիւնների լեզուն, ինչպէս արդէն յիշեցնաց, անյաղթելի գծուարութիւններ են յառաջացնուում հետազոտութեան համար, ուստի հասկանի է, թէ որպիսի օգուտ կարող են բերել նոցա մեկնութեան համար յիշաւակարանի վայրերի

վրայ կատարած անձնական զիտութեան և խորհրդածութիւնները, թէ ի՞նչ պայմաններում, ի՞նչ զիտաւորութիւնների կանգնած կը այն (յիշաւարականը)։ Բաց ի գորանից, բեւեատագիր արձանագրութիւնները ծառայում են իրեւ յիշաւակարաններ Վանի թագաւորինների աշխարհակալութեանց կովկասում, և բովանդակուում են իրեանց մէջ մեծաքանակ նշանաւոր աշխարհագրական գիտելիքներ, որ կառելի է յարմարացնել արդի վայրերին և հառ զորդակցութեան ճանապարհուներին։ Փայտերի ու հին շինութեանց վրայ եղած արձանագրութիւնները՝ մեջ ճանապարհ են ցուցանում, որով յառաջ կին ընթանուում Վանի աշխարհակալները դէպ ի հիւսիս, ծառայում են պատպէս ասած, իրեւ վերստերի սիներ։ Կոյսա մէջը ուղղակի յիշուում են երկիրների ու բաղացների անունները, որոնց նուածուած են եղել այն վայրերուում, ուր զտնուում է արձանագրութիւնը։ Խոսում է ատամանների, պալատների, ջրմուռների կառուցման մասին, և արձանագրութեան բովանդակութեան ըցնանութիւնը՝ տեղի պարագաներով հանդերձ, ուր որ կա զտնուած է, շատ զէպիքիում հնարաւորութիւն է տալիս նշութեամբ, կամ գոնէ, շատ հաւանական կերպով յարմարացնել կին երկիրները, բաղացները և է շնչերը այժմեան տեղերին։ Կ'ասենք աւելին, տեղի պայմանների ուսումնասիրութիւնը՝ արձանագրութիւնների մէջ եղած աշխարհագրական գիտելիքների հետ ի միասին՝ յաճախակի կարող է տալ շատ օգտաւէտ ցուցումներ այն փոքրիկ բաղացական մարմինների կազմակերպութեան պայմանների մասին, որ կոչուում են թագաւորութիւններ, որոնց վրայ բաժանուում էր այս նահանգը, որպէս և նոցա փոխարինի յարաբերութեան մասին։ Կզառագատելով այս ամենը, ես չըրաժարվեց ցայ ինձ առաջարկած բարձր պատուից՝ մասնակցելու ձեռնարկութեան, լաւ հասկանալով իմ անփորձութիւնը հնագիտական հետազուարկարելու կատարելուում բախի բուն շահագիտական համար յիշաւակարանի վայրերից Պ. Ա. Խիւնովսկուն տուած հրահանգն աւելի ընդարձակ էր։ Հնագիտական և մարզաբանական նպատակա, կագարելի

Ճանապարհորդութեանց հմուտ պարոնը, բաց ի մեր հասարակ զսրծից՝ այն է արձա-նազորութիւններից, ընդօրինակել կարելովն չափ ճիշդ էստամպաժներ ու հետազոտել վայ-րերը, իւր վրայ ստանձնեց հնագիտական և աշխարհագրական հետազոտութիւններ լայն ծրագրով, որպէս և պեղութեան ու լուսանկար-ներ հանելն: Հրատարակովիթեանս կցած լու-սանկարների մեծագոյն մասն նա ինքն ան-ձամբ է հանած Ընկերութեան պատկանեալ գործիքով:

Եթանի ընդարձակութիւնը, ուր մեզ վե-ճակուած էր զործել (Երեւանի և Ելիսաբեթ-պոլի նահանգ) և ժամանակի սղութիւնը (յունիսի 20-ից մենչեւ սեպտեմբերի 5-ն 1893 թ.) մեզ հարկադրեցին ձեռնարկու-թեանս տառջին նուազին արձանիլ միմեան-ցից, և հետազոտութիւններ կատարել զանա-զան տեղերում. Ա. Խվանովսկին դիմեց զիս Ք Սեւանայ լին. իսկ եւ զէս ի Էջմիածնին՝ այնտեղ պահած արձանազրութիւններն հե-տազոտելու համար. այն տեղից անցայ Ար-քադածի վրայ, յաճախեցի Լույիճճանը և հա-նեցի այն զինում եղած արձանազրութիւնը, յետոյ իջայ Ալիքանսզրապօլի զաշտավայրը և հետազոտեցի Գանլրճան: Միայն օգոստո-սի 10-ին մենք միացանց Էջմիածնում, որ միասին սկսենք մեր հետազոտութիւնները Արքախ հովում. ժամանեցինք, այսպէս ա-սած, Արմավիրը, անցանց Սարտարապատ, յետոյ Դաշզուռան և Արարատի նախալեռ-ները, ուր քանի մի տեղերում պեղութեար կատարեցինք. Հետեւեալ 1894 թ. ճանա-պարհորդութիւնը նոյն տեղերում ընդզրո-կելով նաեւ կարսի երկիրը, կատարեց Ա. Խվանովսկին մենակ և զա շարունակութիւնն էր մեր սկսած աշխատանքների՝ և իրագոր-ծումն դիմուրեալ ծրագրի:

Ջենարկութեանս զիսաւոր նպատակն, այն է վայրերի հետազոտութիւնը, ուր զլա-նըւում են բեւուազիր անձանազրութիւններ, նոցա արաւահանումն լուսանկարչութեան միջ-նորդթեամբ և էստամպածով, մենք ըստ կարելոյն չափ կատարեցինք: Ճշմարիք է, երկու արձանազրութիւններ մենք չկարողա-ցանց գանել ամենեին (Յորք Դաշզուռու-

նեանը [N. III] և Ղազանչու [N. IV]), բայց զորա փոխարէն յայտնուեցան չորս զիտութեան համար տակաւին անյայտ ար-ձանազրութիւններ, շատերից առաջին ան-գամ հանուեցան բաւարար էստամպաժներ (զոր օրինակ Ալուչալուի արձանազրութիւնը, որ մեծ զիուրութեամբ հանեց Ա. Խվա-նովսկին, ենթարկվելով վաստանվերներն, արձա-նազրութիւն Զաղալու գիւղում). Ցացեալ բոլոր արձանազրութիւնները լուրջ կերպով ուսումնասիրվեցան և նոցանից անսուեցան լաւագոյն լուսանկարներ և էստամպաժներ: Պիեռման կատարուեցան Սևանայ ըմբ հա-րաւային ափերում, Գանլըճայում Ալիքան-զրապօլի մօտերբում և Դաշզուռունի մօտ երկու աեղում: Բաց ի սերումներից ստացած հետարկըրի առարկաներից, որոնց մասն հազորուելու է Ա. Խվանովսկին, մեր ճա-նապարհորդութեան միջոցին, մանաւանդ Պ. Խվանովսկու ձեռքով հաւաքուած նե շատ նիւթեր մասամբ հնագիտական, մասամբ Էլ աշխարհագրական, որոնք վերաբերում են համեմատարար այս վայրերի պատմութեան յետին (Հայկական) ժամանակամիջոցին. ա-մենից շատ նա տեղեկութիւններ է ծողովել ճարտարապետական յիշտարարանների, հին եկեղեցիների և վանքերի մասին (*):

Բեւուազիր արձանազրութիւնների մասին մեր հաւաքուած նոր նիւթերը նշանաւոր կեր-պով պիտի ընդարձակելին մեր տեղեկութեանց աշհմանները այս ապթիւ, ուստի յառաջ ըստ ընծայելն սոյն մանրամասն հաշուփո, որ բաւականին ուշացաւ զանազան հնագամանը-ների նորհիւ, ես հրատարակեցի քանի մի հա-մառու գիտելիքներ, որպէս զի կարողանամ հազորուել մեր նոր զիւտերի մասին նոցա, ով որ հետաբերբում է այս աեսակ հետա-զրութիւններով. Հնագիտական Ընկերու-րան հանդիսի էջերում (Արքեօլոգուէտէռէքս Իշտուուաշ և Զամետաշ, 1893, N. 12. – և Հնագիտական լուրեր ու Ակատումներ և Կա-զանելու հետեւեալ յօդուածը. Կառոօبرا-

(*) Ա. Խվանովսկու հետազոտութիւնները տա-կաւին հրատարակուած չեն: Երան. բարգ. *

знал налгисъ Русы I въ Келаны-Кирланы (Алугамъ) на берегу Гокен въ Эриванскоѣ губерніи « рѣкѣиафѣр аրձանագրութիւն Ռուզս Աւրծա առաջի Գօրանք-Գրանեռ (Ալուզալու) Սեւանայ ափերում, Երևանի նահանգում, » орѣн կցած է բնագիրը, տրանսկրիպցիան, և հիսկ արձանագրութիւնների թարգմանութիւնը, նաև մի նկատողութիւն քանի մի սրբազրութեանց մասին առաջ հրատարակ միագիրներում. Արեւմտեան դիտութիւնը երախտագիտութեամբ ընդունելով մեր այս գործը՝ ըստ արժան ոյն գնահատեց և օգուտ քանի դորանից: Պրօֆ. Աւելը մեր հրատարակութեանը նույրեց հետեւեալ յօդուածը: *The Cuneiform Inscriptions of Van* (*), « Վանի բնասագրի արձանագրութեանը », պրօֆ. Լեմանը Է՛տ ուսուց Herrscher von Chaldea, թելը և այլն: Բայց ի այս նոր տեղեկութիւններից, որ նշանակութիւն ունին Ասորեստանի ու Բարեկրնի ուսումնագրութեան և տիեզերական պատմութեան համար, մեր հաւաքած նիմիթերը հնարաւորութիւն տալին աւելի ճիշտ զաղափար կազմել Արքանեան ժամանակի՝ մեր հետազոտած վայրերի աշխարհագրական և բաղարական պարզաների մասին, որպէս և այն ճամանագրահների (մասին), որով յաւաջ ին ճամանութիւնը պատմուած է աշխարհական շաբաթութիւնը, « Հին աշխարհ Աւրարտու (Արարտա) և սորեստան. — բարեկրնեան կողառությի հետեւեր կովկասուն »: « Ճրենու սուրան Արարտ (Արարտ) և ուժու ասոր-օսունուն կուլուրի Կավեած տես Յամաւեւնին (Պերում ու Ա. Թօւրագիտեական Օթա Առ. Օ. Ա. Ե. Ա. Զ.) 1895. Խ. 1. ». Աւելի մանրամասն և գրաւոր յիշատակարանների վրայ յենուած բացառութիւն՝ Անդրկովկասի աշխարհագրական ու բաղարական պայմանների մասին, ընթերցողները կը գտնեն մեր ներկայ աշ-

խատութեան մէջ: Այս վերջնից պարզ կարելի է տեսնել, որ Անդրկովկասի ազգութիւնները կամ աւելի ճիշտ ասելով, արդի Երեւանի, Գանձակի և Կարսի նահանգները բնիը, պատկանելով մի և նոյն ցեղին, չին կապում բնաւ մի սերտ կապուած քաղաքական մարմին: Այսաեղ, ընդհակառակին, մենք տեսնուում ենց բազմաթիւ բաժան բաժան, միմեանցից անկախ տերութիւններ, որոնց կապավարում էին առանա թաւուածի թագուրների ձեղուով: Արձանագրութիւնների կառուաւում նոյնից ամենայն մէկն՝ աշխարհ էր կոչում կամ երկիր. Խնչպէս, օրինակի համար, Ասորեստանից աշխարհ, Բիայնայի (Վանի) և այլն. իսկ կապավարի հներն՝ թագուրներ, բայց իրօց ոչ այլ ինչ էին, բայց եթէ գերմանական կոմունութիւններ, և թագուրու կոչումն պէտք է հասկանաւ գերմանական Կօնց բարի մորգով միջին զարերում (*): Այդպիսի աշխարհներ վերայիշեալ նահանգների սահմաններում՝ կարելի է հաշուել մի ցանի տասնեակ: Խրաւ է, հմբք կայ կարծելու, որ նոցանից մի բանիսը, զոր օրինակ, Է՛ւնուն-էտունի, Երահի-էրիան, էլ համեմատաբար աւելի մեծ նշանակութիւն ունին, քան թէ ուրիշները, բայց ինչնումն էր կայանում նոցա անդրանկութիւնը: կամ առաւելութիւնը միւսներից, գտուար է աւել: Վանի թագաւորների աշխարհհակալութեանց ժամանակամիջոցին, անեներն է, որ նոցա քաղաքականագէ միացնում էր միայն Վանի արքայի իշխանութիւնը, որից նոցա, անկամած, աւանդական կախումն ունին: Բայց Վանի թագաւորներին հեշտ չէր ենթարկել ու պահել նոցա այդպիսի նուանեալ զրութեան մէջ: Նման Ասորեստանից թագաւորներին, որոնց հարկադրուած էին անզարար արշաւանքներ կատարել հնազանգութեան մէջ պահելու համար Միջագետքի, Ասորեստ և Պաղեստինի բազմաթիւ՝ իրանց ցեղակից, սեմական ազգութիւնները. նոյնպէս և Վանի թագաւորներն էլ պէտք է ան-

(*) See The Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland, october 1894, Part, V.

(*) Այդ խոսքերը մասսամբ, կարծես, պատառ նախուած էն Ա. Վաշարչակի հացերին. այսինքն « Ուստի նախարարութիւնը » որ ասս կան » (Մ. Խորեն. Պատամ. Գ. Ա. Վ. Ա. Ք.): Մասն. բարդ. ։

ընդհատ արշաւանքներ կատարէին զեա ի այս հիւսիսային աշխարհը, որ ամենայն հաւանովթեամբ, նոցա նախնական հայրենիքն էր, որ ապրում էին նոցա հեա մի և նոյն ծագումից յառաջացած ազգովթիններ, նոցա սահմաններում ամուգ բազարներ շինէին, և փոխարքայովթեան նման մի իշխանութին հաստատէին:

Այսաեղ մենք ընդհատում ենք մեր քաղուածները Պ. Նիկոլասիու ներածովթիննից և անցնում ենք բուն երկին, ուր իւրաքանչիւր բեւեազիր արձանազրութինը ունի իւր արշանկիրական, թարգմանովթինը և գիտնական մեկնութիւնը. մենք զիտաւորութինն չոմինը տալ Հայ ընթերցողին ամբողջ զրոյի թարգմանովթինը, այլ շատանալու ենք նորա համաօտ բովանդակովթեամբ:

Շարունակելի

Խ. ՅՈՎ.ՀԱՅՆԻՍԵԱՆՑ

Փետր. 14, 1897, Մոսկվա.



ԱՍՏՈՒԱՆԱՇԱՇՈՒԽ ԳՐԱՅ ՅԱՐԴՆ

Ա. Խ. Ա. Խ. Հ. Ա. Յ

(ՀՅԱ Պ. Ս. ՎԵՐԵՐԻ)



Հ. Ա. Յ աղջն, յես գարէին ի քրիստոնէութիւն, մեծ եռանդ մ'ունցաւ իրեն մերձաւոր բարգաւաճ ազգաց զրականական գանձերը իւրացըներու¹. Եւ աստի յառաջ եկաւ այն փափաքն, չնչեցընելու Հայ ականջաց ս. Գրոց խոսքերը՝ իւր մայրենի քաղցրաձայն բարբառնեն, — որ և փութով գործադրուեցաւ: Վասն զի Սակայս և Մերոպապա ժամանակին եղած ս. Գրոց թարգմանութիւնն ամբողջ ազգին պիտանի և մատչելի ըրաւ Աստուածաշոնչ մատիննը, ազգի մը՝ որ ամենայն փութով և լանիւք կ'ալիստէր ճշմարտութեան այդ անզուգական գանձուն խելամոռութեան մէջ խորաթափանց լինել: Եւ այդ յայտնիքն կ'երսի այնու, որ Եղիշէ² պատմելով Վարդանաց պատերազմը՝ կը դրուատէ յայժ

զապարապետն Վարդան, ազնուատոհմ սերունդը, թէ նա իւր պատանեկութենէն ի վեր կրկին կտակարանաց ևս հմուտ էր: — Նոյն պատմիչն կ'աւանդէ մեղ Ղեւոնդայ վարդապետի իրախոսուիչ խօսքերը հաւատոց համար Պարսից դէմ ըրած պատերազմի ատեն, յորում նա՝ յետ մէջ բերելու սուրբ գրեն բաւական վկայութիւններ՝ կը յաւելու³. «Եւ այլ զի՞նչ ևս երկրորդեցից առաջի ձերոյ քաջ նահատակութեանդ, զի քան զիս տեղիվագոյնը և հմուտք էք սուրբ կտակարանացն»: — Եւ ի նոյն Եղիշեայ՝ կ'աւանդուի քարձեալ, թէ միանձանց սեփական գործ զոր համարուած էր մեկնութիւն ս. Գրոց՝ ըստ շափու շնորհացն Աստուածոյ, ի միթարութիւն ունկնդրաց:

Հետևեալ տոքըն պիտի լուսաւորեն սակաւ մի այս խորհրդածութեանն ծանօթութիւնը, որ ս. Գրոց մէջ կայ ըստ իւր գերբնական յատկանցին:

Արդ հարկ է քննել՝ թէ ո՞ր զրբերն աստուածունչ կամ կանոնական կը համարուէին առ նախիին Հայոս. որովհետև էին աղջի մը աստուածային ներշնչման մասին ունեցած վարդապետութիւնը կրնանք այժմ սահմանել բուն իսկ նոյն ազգին կանոնական գրոց ցուցակէն. և Փարուն Աստոյ տոյն եկեղեցոյ գրականութիւնն ևս՝ այսպիսի հետազոտութեան նիւթը կը մատակարպէ: Աստուածայունչ զրոց հայկական թարգմանութեան ծագման և ժամանակին վրայ յուղուած խնդրոյն պատասխան⁴ տրուեր է ցարդ նախնարար այն աեղեկութեամբ, զոր Մովսէսի Խորենացի կ'աւանդէ իւր Հայոց պատմութեան մէջ⁵: Սակայն կ'ազգարայ Փարպեցու կայ ինչ սեփական դէմ առ դէմ զերոյիշեալ սեղեկութեան Խորենացոյ, վասն զի Հազար ևս ծանօթութիւն մի կու տայ ս. Գրոց, գէթ հին կտակի կանոնի մասին: Եւ մինչեւ կերին⁶ բաւական կը համարի աւանդել՝ թէ կրկին կտակարանք ևս միանցամանի թարգմանութեանը, այնանք կերպով հաստատուած կ'երեկի արդէն իսկ

4. Աստուածայունչ. Վենետ. Էջ. 84.

5. Նոյն. Էջ. 161:

6. Լ. Հուկ. Ներած. ի նոր կտակ. — Ա. Մայէր. Ներած. ի նոր կտակ. 558. — Եղիշ. Բանգ. Բ. 729-30. — Կաւէլն. Ներած. 170:

7. Գ. Գրիգ. Ա. Վ. Վենետ. 1892. Էջ. 52.

8. Գատմ. Հայ. Վենետ. 1892. Էջ. 81.